ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19-20-01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

09 օգոստոսի 2019թ. քք. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյանի
Փոխնախագահ՝ Ա. Ազարյան
անդամներ՝ Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Վ. Բերակչյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 02/08/19թ. «Շիրակ»-«Ուրարտու» (ԲԽ002) խաղին «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Արտակ Դաշյանի (N 3204) հեռացման մասին (մրցակցին հայհոյելու համար) /զեկուցող Հ. Ռշտունի /

2. 06/08/19թ. «Մասիս»-«Դիլիջան ՖԱ» (ԱԽ001) խաղի մասին (հանդիպումը չի կայացել՝ թիմերի անպատրաստ լինելու պատճառով) /զեկուցող Հ. Ռշտունի /

3. 06/08/19թ. «Մասիս»-«Դիլիջան ՖԱ» (ԱԽ001) խաղի մասին (հանդիպումը չի կայացել՝ թիմերի անպատրաստ լինելու պատճառով) /զեկուցող Հ. Ռշտունի /

4. 06/08/19թ. «ՈՒրարտու-2»-«Անի» (ԱԽ002) խաղի մասին (խաղը 45 րոպե ուշ է սկսվել «Անի» թիմի կողմից ֆուտբոլային անձնագրերը և թիմի արձանագրությունը ուշ ներկայացնելու պատճառով) /զեկուցող Հ. Ռշտունի /

5. 07/08/19թ. «Սևան»-«Վեստ Արմենիա» (ԱԽ003) խաղի մասին (խաղը չի կայացել, քանի որ «Սևան» թիմը չի ունեցել հայտավորված պաշտոնյա) /զեկուցող Հ. Ռշտունի /

6. «ՖԱ Աչաջուր ՀԿ»-ն դադարեցնում է «Մակարավանք» թիմի ՀՀ ֆուտբոլի 2019-2020 առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունը /զեկուցող Հ. Ռշտունի /

7. «ՖԱ Երևան» ակումբը դադարեցնում է «Երևան-2» թիմի ՀՀ ֆուտբոլի 2019-2020 առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունը /զեկուցող Հ. Ռշտունի /

8. «Գանձասար-Կապան ՖԱ»-ն դադարեցնում է «Գանձասար-Կապան-2» թիմի ՀՀ ֆուտբոլի 2019-2020 առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունը /զեկուցող Հ. Ռշտունի /

9. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների հանդիպումների պատվիրակների զեկույցների քննարկում

9.1. 02/08/19թ. «Արարատ»-«ՖԱ Երևան» (ԲԽ001) խաղի մասին (անվտանգությունը պատշաճ կերպով չէր կազմակերպված, բացակայում էր հավատարմագրման համակարգը, տոմսային համակարգը չէր գործում) /զեկուցող Հ. Ռշտունի /

9.2. 02/08/19թ. «Շիրակ»-«Ուրարտու» (ԲԽ002) խաղի մասին («Ուրարտու» թիմը նախախաղային խորհրդակցությանը մարզահագուստը ներկայացրել էր 30 րոպե ուշացումով) /զեկուցող Հ. Ռշտունի /

9.3. 02/08/19թ. «Շիրակ»-« Ուրարտու » (ԲԽ002) խաղի մասին (համաձայն պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի դաշտի տեր ակումբը մրցավարներին պետք է տրամադրի 2 էլեկտրոնային ցուցատախտակ, սակայն տրամադրել էր 1-ը, իսկ էլեկտրոնային լուսատախտակը երկրորդ խաղակեսի մեկնարկից ժամանակը ցույց էր տալիս 0-ից) /զեկուցող Հ. Ռշտունի /

9.4. 03/08/19թ. «Գանձասար-Կապան»-«Նոա» (ԲԽ005) խաղի մասին (անվտանգությունը ապահովված չէր, տոմսային համակարգը չէր գործում) /զեկուցող Հ. Ռշտունի/

9.5. 03/08/19թ. «Գանձասար-Կապան»-«Նոա» (ԲԽ005) խաղի մասին (միջադեպ «Նոա» թիմի երկրպագուների հարցերով պատասխանատու Էդգար Պետրոսյանի և մարզադաշտի աշխատակցի միջև) /զեկուցող Հ. Ռշտունի /

9.6. 06/08/19թ. «Ուրարտու-2» -«Անի» (ԱԽ002) խաղի մասին («Անի» թիմի մարզահագուստի վրա ֆուտբոլիստների ազգանունները բացակայում էին) /զեկուցող Հ. Ռշտունի/

9.7. 06/08/19թ. «Ուրարտու-2» -«Անի» (ԱԽ002) խաղի մասին («Ուրարտու-2» թիմի մարզահագուստի վրա ֆուտբոլիստների ազգանունները բացակայում էին, չեն ապահովվել գնդակ մատակարարող ֆուտբոլիստների քանակը, կարգադրիչները չունեին տարբերիչ հագուստ, բացակայում էր հավատարմագրման համակարգը) /զեկուցող Հ. Ռշտունի /

9.8. 06/08/19թ. «Շիրակ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ004) խաղի մասին («Ալաշկերտ-2» թիմը խաղի հայտացուցակը պատվիրակին ներկայացրել են 40 րոպե ուշացումով) /զեկուցող Հ. Ռշտունի /

9.9. 06/08/19թ. «Շիրակ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ004) խաղի մասին («Շիրակ-2» թիմի խաղի հայտացուցակը պատվիրակին ներկայացրել են 40 րոպե ուշացումով, կարգադրիչները չունեին տարբերիչ հագուստ, բացակայում էր հավատարմագրման համակարգը) /զեկուցող Հ. Ռշտունի /

9.10. 07/08/19թ. «Արարատ-Արմենիա-2»-«Վան» (ԱԽ007) խաղի մասին (անվտանգությունը պատշաճ կերպով կազմակերպված չէր, բացակայում էր հավատարմագրման համակարգը, չկային կարգադրիչները) /զեկուցող Հ. Ռշտունի /

1. 02/08/19թ. «Շիրակ»-«Ուրարտու» (ԲԽ002) խաղին «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Արտակ Դաշյանի (N 3204) հեռացման մասին (մրցակցին հայհոյելու համար)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 02/08/19թ. «Շիրակ»-«Ուրարտու» (ԲԽ002) խաղին «Ուրարտու» թիմի ֆուտբոլիստ Արտակ Դաշյանի (N 3204) հեռացման (մրցակցին հայհոյելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 32-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Արտակ Դաշյանին որակազրկել 2 խաղով, ՖԱ Ուրարտու ՄՀԿ ակումբին տուգանել 250000 ՀՀ դրամ:

2. 06/08/19թ. «Մասիս»-«Դիլիջան ՖԱ» (ԱԽ001) խաղի մասին (հանդիպումը չի կայացել՝ թիմերի անպատրաստ լինելու պատճառով)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2. 06/08/19թ. «Մասիս»-«Դիլիջան ՖԱ» (ԱԽ001) խաղը չի կայացել թիմերի անպատրաստ լինելու պատճառով՝ «Մասիս» թիմը որպես դաշտի տեր խաղի կազմակերպման պարտականությունները չկատարելու, հայտավորված պաշտոնյաների և ֆուտբոլիստների կազմ չունենալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝«Մասիս» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Մասիս» ՖԱ ակումբին տուգանել 50000 ՀՀ դրամ:

3. 06/08/19թ. «Մասիս»-«Դիլիջան ՖԱ» (ԱԽ001) խաղի մասին (հանդիպումը չի կայացել՝ թիմերի անպատրաստ լինելու պատճառով)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

3. 06/08/19թ. «Մասիս»-«Դիլիջան ՖԱ» (ԱԽ001) խաղը չի կայացել թիմերի անպատրաստ լինելու պատճառով՝ «Դիլիջան ՖԱ» թիմը հայտավորված պաշտոնյաների և ֆուտբոլիստների կազմ չունենալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ ԴՖԱ ՓԲԸ ակումբին տուգանել 25000 ՀՀ դրամ:

4. 06/08/19թ. «Ուրարտու-2»-«Անի» (ԱԽ002) խաղի մասին (խաղը 45 րոպե ուշ է սկսվել «Անի» թիմի կողմից ֆուտբոլային անձնագրերը և թիմի արձանագրությունը ուշ ներկայացնելու պատճառով)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

4. 06/08/19թ. «ՈԻրարտու-2»-«Անի» (ԱԽ002) խաղը 45 րոպե ուշ է սկսվել «Անի» թիմի կողմից ֆուտբոլային անձնագրերը և թիմի արձանագրությունը ուշ ներկայացնելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն՝ ՖԱ Անի ՀԿ ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ:

5. 07/08/19թ. «Սևան»-«Վեստ Արմենիա» (ԱԽ003) խաղի մասին (խաղը չի կայացել, քանի որ «Սևան» թիմը չի ունեցել հայտավորված պաշտոնյա)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

5. 07/08/19թ. «Սևան»-«Վեստ Արմենիա» (ԱԽ003) խաղը չի կայացել, քանի որ «Սևան» թիմը չի ունեցել հայտավորված պաշտոնյա, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Սևան» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Սևան ՖԱ» ակումբին տուգանել 30000 ՀՀ դրամ:

6. «ՖԱ Աչաջուր ՀԿ»-ն դադարեցնում է «Մակարավանք» թիմի ՀՀ ֆուտբոլի 2019-2020 առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

6. «ՖԱ Աչաջուր ՀԿ»-ի «Մակարավանք» թիմի ՀՀ ֆուտբոլի 2019-2020 առաջին խմբի առաջնությանը հետագա մասնակցությունը դադարեցնելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Մակարավանք» թիմին հանել Առաջին խմբի և Գավաթի խաղարկության մրցումներից, «ՖԱ Աչաջուր ՀԿ»-ի տուգանել 500000 ՀՀ դրամ։

7. «ՖԱ Երևան» ակումբը դադարեցնում է «Երևան-2» թիմի ՀՀ ֆուտբոլի 2019-2020 առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունից.

ՈՐՈՇԵՑԻՆ՝

7. «ՖԱ Երևան»-ի «Երևան-2» թիմի ՀՀ ֆուտբոլի 2019-2020 առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունը դադարեցնելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնագրքի 31-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝«Երևան-2» թիմին հանել Առաջին խմբի առաջնությունից, «ՖԱ Երևան»-ին տուգանել 200000 ՀՀ դրամ։

8. «Գանձասար-Կապան ՖԱ»-ն դադարեցնում է «Գանձասար-Կապան-2» թիմի ՀՀ ֆուտբոլի 2019-2020 առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունից.

ՈՐՈՇԵՑԻՆ՝

8. «Գանձասար-կապան ՖԱ»-ի «Գանձասար-Կապան-2» թիմի ՀՀ ֆուտբոլի 2019-2020 առաջին խմբի առաջնության հետագա մասնակցությունից դադարեցնելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-Կապան-2» թիմին հանել Առաջին խմբի առաջնությունից, «Գանձասար-Կապան ՖԱ»-ին տուգանել 200000 ՀՀ դրամ։

9. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների, պատվիրակների զեկուցագրերի քննարկում

9.1. 02/08/19թ. «Արարատ»-«ՖԱ Երևան» (ԲԽ001) խաղի մասին (անվտանգությունը պատշաճ կերպով կազմակերպված չէր, բացակայում էր հավատարմագրման համակարգը, տոմսային համակարգը չէր գործում)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.1. 02/08/19թ. «Արարատ»-«ՖԱ Երևան» (ԲԽ001) խաղին (անվտանգությունը ոչ պատշաճ կազմակերպելու, հավատարմագրման համակարգը բացակայելու, տոմսային համակարգը չգործելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 41-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 ՀՀ դրամ, տոմսային համակարգը ներդնելու համար ակումբին տալ ժամանակ մինչև ս/թ սեպտեմբերի 1-ը։

9.2. 02/08/19թ. «Շիրակ»-«ՈՒրարտու» (ԲԽ002) խաղի մասին («ՈՒրարտու» թիմը նախախաղային խորհրդակցությանը մարզահագուստը ներկայացրել էր 30 րոպե ուշացումով)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.2. 02/08/19թ. «Շիրակ»-«ՈՒրարտու» (ԲԽ002) խաղին («ՈՒրարտու» թիմը նախախաղային խորհրդակցությանը մարզահագուստը 30 րոպե ուշացումով ներկայացնելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «ՖԱ Ուրարտու» ակումբին հայտարարել նկատողություն։

9.3. 02/08/19թ. «Շիրակ»-«ՈՒրարտու» (ԲԽ002) խաղի մասին (համաձայն պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի դաշտի տեր ակումբը մրցավարներին պետք է տրամադրի 2 էլեկտրոնային ցուցատախտակ, սակայն տրամադրել է 1-ը, իսկ էլեկտրոնային լուսատախտակը երկրորդ խաղակեսի մեկնարկից ժամանակը ցույց էր տալիս 0-ից)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.3. 02/08/19թ. «Շիրակ»-«ՈՒրարտու» (ԲԽ002) խաղին (Դաշտի տեր ակումբը էլեկտրոնային ցուցատախտակ չտրամադրելու, էլեկտրոնային լուսատախտակը սխալ գործածելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Շիրակ ՖԱ» ակումբին հայտարարել նկատողություն։

9.4. 03/08/19թ. «Գանձասար-Կապան»-«Նոա» (ԲԽ005) խաղի մասին (անվտանգությունը ապահովված չէր, տոմսային համակարգը չէր գործում)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.4. 03/08/19թ. «Գանձասար-Կապան»-«Նոա» (ԲԽ005) խաղին (անվտանգությունը ապահոված չլինելու, տոմսային համակարգը չգործելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 41-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբին տուգանել 80000 ՀՀ դրամ, տոմսային համակարգը ներդնելու համար ակումբին տալ ժամանակ մինչև ս/թ սեպտեմբերի 1-ը։

9.5. 03/08/19թ. «Գանձասար-Կապան»-«Նոա» (ԲԽ005) խաղի մասին (միջադեպ «Նոա» թիմի երկրպագուների հարցերով պատասխանատու Էդգար Պետրոսյանի և մարզադաշտի աշխատակցի միջև)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.5. 03/08/19թ. «Գանձասար-Կապան»-«Նոա» (ԲԽ005) խաղին («Նոա» թիմի երկրպագուների հարցերով պատասխանատու Էդգար Պետրոսյանի և ստադիոնի աշխատակցի միջև միջադեպի) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 24-րդ կետի համաձայն՝«Նոա» թիմի երկրպագուների հարցերով պատասխանատու Էդգար Պետրոսյանին հայտարարել նկատողություն, «Նոա ՖԱ ՀԿ»-ին տուգանել 50000 ՀՀ դրամ։

9.6. 06/08/19թ. «ՈՒրարտու-2»-«Անի» (ԱԽ002) խաղի մասին («Անի» թիմի մարզահագուստի վրա ֆուտբոլիստների ազգանունները բացակայում էին)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.6. 06/08/19թ. «ՈՒրարտու-2»-«Անի» (ԱԽ002) խաղին («Անի» թիմի մարզահագուստի վրա ֆուտբոլիստների ազգանունները բացակայելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «ՖԱ Անի» ակումբին հայտարարել նկատողություն։

9.7. 06/08/19թ. «ՈՒրարտու-2»-«Անի» (ԱԽ002) խաղի մասին («ՈՒրարտու-2» թիմի մարզահագուստի վրա ֆուտբոլիստների ազգանունները բացակայում էին, չեն ապահովել գնդակ մատակարարող ֆուտբոլիստների քանակը, կարգադրիչները չունեին տարբերիչ հագուստ, բացակայում էր հավատարմագրման համակարգը)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.7. 06/08/19թ. «ՈՒրարտու-2»-«Անի» (ԱԽ002) խաղին («ՈՒրարտու-2» թիմի մարզահագուստի վրա ֆուտբոլիստների ազգանունները բացակայելու, գնդակ մատակարարող ֆուտբոլիստների քանակը չապահովելու, կարգադրիչների տարբերիչ հագուստ չունենալու, հավատարմագրման համակարգը բացակայելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «ՖԱ Ուրարտու» ակումբին տուգանել 60000 ՀՀ դրամ։

9.8. 06/08/19թ. «Շիրակ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ004) խաղի մասին («Ալաշկերտ-2» թիմի խաղի հայտացուցակը պատվիրակին ներկայացրել են 40 րոպե ուշացումով)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.8. 06/08/19թ. «Շիրակ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ004) խաղին («Ալաշկերտ-2» թիմի խաղի հայտացուցակը 40 րոպե ուշացումով պատվիրակին ներկայացնելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամ։

9.9. 06/08/19թ. «Շիրակ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ004) խաղի մասին («Շիրակ-2» թիմի խաղի հայտացուցակը պատվիրակին ներկայացրել են 40 րոպե ուշացումով, կարգադրիչները չունեին տարբերիչ հագուստներ, բացակայում էր հավատագրման համակարգը)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.9. 06/08/19թ. «Շիրակ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ004) խաղին («Շիրակ-2» թիմի խաղի հայտացուցակը 40 րոպե ուշացումով պատվիրակին ներկայացնելու, կարգադրիչները տարբերիչ հագուստներ չունենալու, հավատարմագրման համակարգը բացակայելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 40000 ՀՀ դրամ:

9.10. 07/08/19թ. «Արարատ-Արմենիա-2»-«Վան» (ԱԽ007) խաղի մասին (անվտանգությունը պատշաճ կերպով չէր կազմակերպված, բացակայում էր հավատարմագրման համակարգը, չկային կարգադրիչները)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.10. 07/08/19թ. «Արարատ-Արմենիա-2»-«Վան» (ԱԽ007) խաղին (անվտանգությունը ոչ պատշաճ կազմակերպելու, հավատարմագրման համակարգը բացակայելու, կարգադրիչներ չլինելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 41-րդ կետի համաձայն՝ «Արարատ-Արմենիա» ակումբին տուգանել 40000 ՀՀ դրամ:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգը.

Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: